

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعه علوم

ԽՄԲԱԳՐԱԳԵՅ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈՂԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 36

1898 ՆՈՅԵՄԲԵՐ 28

Ամեն Տեղի համար Տարեկան կանխիկ 50 դահեկան, Վեցամսեայ 20 խիստ արժանեայ, 13 դահեկան: Օգտու երկուց համար տարեկան կանխիկ 15 Գրան: Բողոքարի ծախքը եւ քաղաքացիական կը վերաբերի: Հատը 40 փարայ: Գաւառներէ բարձր բոլ ալ կ'ընդունուի 100 դրուի յետ 105 դրուի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մ. Կ. ՄԱՂԱՔԵԱՆ. — Այգեղործական:

Ա. ԽԱՇԵԱՆ. — Առողջապահական նօթեր. Սեղմիրանը:

Մ. Խ. ԹԱՂԱՔԵԱՆ. — Լեզուաբանական, Արաբերէն լեզուն:

Մ. Կ. ՄԱՂԱՔԵԱՆ. — Երկրագործական ճարտարարուեստներ. Բաղախ:

ՄԻՀՐ. — Որովայնային ութիւնը կամ որովայնախօս ըլլալու գործնական միջոցներ:

Ղ. ԲՈՂԱՏ. — Ճարտարարուեստական. Սննդեղէնները երկար ատեն պահելու միջոցներ:

Ղ. ԲՈՂԱՏ. — Գետնախնձոր եւ իր մշակութիւնը:

Ազգային եւ Ներքին լուրեր:

Հանրագիտակցի Վայելչադարձութեան Բաժինը:

Հատը 40 փարայ

ՏՊԱԳՐ. ԳՐԻԳՈՐ Գ. ԳԱՅՍԵՐԵԱՆ

Կ. ԳՂԻՐ, ԳՂՂ. Այլ ճամբաներ, ԹԻԻ 4

‘ՎԱՆՐԱԳԻՏԱԿ,,Ի

ՎԱՅԵԼՁԱՂԱՐԴՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆԸ

«Հանրագիտակ»ի ընթերցողներէ շատեր անհամբեր վայելչազարդութեան Բաժնի հրատարակութեան կ'սպասեն, և կը թախանձեն մեզի, որ առաջ ձեռնարկել այդ օգտակար ճիւղին: Մենք իրենցմէ աւելի կը փափաքինք կարելի եղածին չափ շուտ սկսիլ, բայց սկսելու համար պէտք է որ անպատճառ մեր պահանջած 300 բաժանորդներու թիւը լըրանայ, սրպէս զի մենք ալ վստահօրէն ճամբայ ելլենք: Ուստի անոնք որ կը փափաքին ժամ առաջ վայելչազարդութեան հայաբարբառ առաջին թերթը լոյս ընծայուած տեսնել, պէտք է որ իրենք ալ իրենց ծանօթներուն և բարեկամներուն այժմէն յանձնարարեն բաժանորդ արձանագրուիլ: Այժմէն արձանագրուելով իրենցմէ մենք կանխիկ դրամ չենք պահանջեր. և երբ այս կէտին վրայ այսչափ կը ծանրանանք, միմիայն վստահ ըլլալու համար է որ, գէթ այդչափ բաժանորդ պիտի կրնանք ունենալ, թերթին յարատեւութիւնը ապահոված ըլլալու համար:

Յանձնարարեցէք ուրեմն ամէն տեղ, որ այժմէն բաժանորդ արձանագրուին, որու համար բաւ է միայն պարզ թուղթի մը վրայ՝ թերթիս ՅԵՒ երեսը գրտնըւած զեկուցագրին մէկ օրինակը գրել և ստորագրելով մեզ զրկել:

Անոնք որ կը կասկածին պատկերներու կամ պարունակութեան յաջողութեան մասին, և այդ պատճառաւ չեն ուզեր այժմէն արձանագրուիլ, այդպիսիները կրնան հրատարակուելէն երկու

շաբաթ վերջը իրենց ստորագրութիւնը յետս ուղել, և բաժանորդութենէ դադրիլ: Ահա՛ այս կերպով ամէն կասկած փարատած կ'ըլլանք և հրաւեր կը կարդանք որ շանան վաղ ընդ փոյթ արձանագրութեան ցանկը լրացնել:

ՏԳԴ. Բ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ՄԱՆԿԱԲԱՐՁ-ԿՆԱՍՏԱՐՈՅԺ, ՄԱՍՆԱԳԻՏ
ՁՂԱՅԻՆ ՀԻԻԱՆԴՈՒԹԵԱՆՑ

Որ իր երկար փորձառութեամբ ծանօթ է, մի քանի տարիէ ի վեր ուսումնասիրութիւններ կատարելէ զկնի ի Բարիզ, դարձած է մայրաքաղաքս, հաստատելով իր բնակութիւնը Բերա Մէթթէպ-Պայրամ-Փողոց, Թիւ 29, ուր ամէն օր կէս օրէ վերջ հիւանդ կ'ընդունի: Մասնաւորապէս կ'դարմանէ կնոջական և ջղային ամէն հիւանդութիւններ: ԵՇ. նոյն ժամուն ձրի կը դարմանէ կարօտեալները: Ելեքտրաբուժում ամէն տեսակներովը, մասնաւոր քննութիւն Ռէօնթկէնեան մեքենայով:

ԲԱՆԱՍԷՐՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Հ. Ս. Տէրվիշեանի ՀՏՏԻՐՈՊԱԿԱՆ
ՆԱԽԱԼԵԶՈՒ անուն գրքին ու ԼԵԶՈՒ հանդէսին ամբողջական հաւաքածոյին պէտք ունեցող բանասէրներն ու գրասէրները կրնան խմբագրութեանս դիմել: Աւելորդ է հոս առաջ բերել այդ երկու հեղինակութեանց արժէքը. ամէն բանասէրի ու գրահմուտի համար անհրաժեշտ գործեր են:

Դիւները խիստ դիւրամատչելի են. փութացէ՛ք առիթէն օգտուիլ մինչև մէկ ամիս, որովհետև օրինակները սպառած են:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ - ՏԵՕՐԷՆ

Ղ. ՌՈՒԱՑ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 36

1898 ՆՈՅԵՄԲԵՐ 28

ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ

Բ.

[Տե՛ս Հանրագիտութիւն 21 Թիւը]

ԿԼԻՄԱՅ.—Կլիման երկրի մը մէտէ-որաբանական երեւոյթներու ամբողջութիւնն է։ Արտ մը այգիի վերածելէ առաջ պէտք է կլիման լաւ ճանչնալ, որովհետեւ գինիի մը տեսակին և շատ անգամ ալ անոր քանակութեան վրայ կլիման մեծ ազդեցութիւն ունի։

Եթէ կլիման ցուրտ է, որթատունկը լաւ չաճիր, իր կենսական գործողութիւնները պէտք եղածին պէս չեն կատարուիր, որով խաղողը չհասունանար և եթէ ցուրտը տևական և խիստ է, որթատունկը բոլորովին կը սառի ու կը մեռնի շատ անգամ առ յաւէտ։ Խաղողը հասնելու համար գրեթէ որոշեալ քանակութեամբ մը տաքութեան պէտք ունի որ կը տարբերի որթատունկը աճած օրէն մինչև խաղողը հասնելու օրը 2200էն 2300 աստիճաններուն մէջ։

Նոյնպէս Յունիս, Յունիս և Օգոստոս ամիսներուն մէջ այսինքն որթատունկին ծաղկած և խաղողին կազմուած ժամանակ պէտք է որ օդը տաք և երաշտ ըլլայ։ Օրուան տաքութիւնը պէտք է հասնի միջին հաշուով գոնէ 18 աստիճանի։ Նոյնիսկ տաք բայց անձրևոտ ամառները այգիի մշակութեան աջարմար են։ Ողկոյզները կը թափին ու խաղողն ալ լաւ չի հասունանար։

ՈՐԹԱՏՈՒՆԿԻՆ ՏԵՍԱԿԸ.—Կլիմայէն վերջը՝ գինիին խաղողին ազնուութեանը և քանակութեանը վրայ մեծ ազդեցութիւն ունի որթատունկին տեսակը։

Դիտենք թէ ուր որ ալ մշակաբուրգն (միւշքէթ) հասնի, խաղողն ու գինին մասնաւոր հաս մեռնին։ Բայց ամէն երկիր միջավայրին յարմարած տեսակներն ունին, տեսակներ՝ որոնք կրնան աղնուլանալ մշակութեամբ և ընտրութեամբ և որոնցմէ կարելի է աւելի առատ և ընտիր բերք ստանալ քան օտար տեսակէ մը։ Յիրաւի մշակաբուրգն ուր որ ալ մշակուի միևնոյն համը և հոսը ունի, բայց բերքին քանակութիւնը զգալի կերպով կը փոխուի կլիմային ու միջավայրին

համեմատ. այս պատճառաւ մշկախաղողը Հիւսիսային եգիպտոսի մէջ աւելի առատ բերք կուտայ քան մեր երկիրներուն մէջ, և արդէն Ալեքսանդրիան և իւր շրջակաները այս տեսակին իբր «ծննդավայրը» նկատուած են:

ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄԱԿԱՔԱՐԱԶՐՈՒԹԻՒՆ.
— Միջավայրի մակաբարձրութիւնը կամ տեղւոյ մը ծովուն մակերեւոյթէն վեր ունեցած բարձրութիւնը պէտք է նկատի ունենալ, երբ այգեմշակութեամբ պարտինք զբաղիլ և գլխաւորաբար երբ կ'ապրինք հիւսիսային ցուրտ երկիրներու մէջ:

Մակաբարձրութեան շնորհիւ է որ կարելի է մշակել այգին Այրեցեալ Դոսիին կամ Միջին Ամերիկայի մէջ. դարձեալ մակաբարձրութիւնն է որ այգիի մշակութիւնը կը սահմանէ հիւսիսային երկիրներու մէջ. օրինակի համար այգին կ'աճի Կիպրոսի և Տաճկաստանի մէջ մինչև 1600 մետր բարձր լեռներու վերայ. այս թիւը կ'իջնայ 1400 մետրի Ալճերիոյ մէջ, 1300 մետրի՝ Էսնայի (Սիկիլիա) վրայ, 800 մետրի՝ Հէթրոյթի մէջ, 480 մետրի՝ Քօթ-Տօւի մէջ և միսիսյն 200—250 մետրի՝ Բարիզի շրջակաները:

ԴԻՐՔ.— Այգիի մշակութեան համար հողին դիրքն ալ մեծ կարևորութիւն ունի. Ափրիկէի մէջ հիւսիսային կողմը նայող այգիները լաւ կը պաշտպանուին Սիրօքօ կոչուած սարսափելի հովերէն, բայց հիւսիսային երկիրներու մէջ այգիներու հիւսիսային դիրքը մշակութեան նպաստաւոր չէ. հոն խաղողը ուշ կը հասնի և գինին կ'ըլլայ քիչ ալքոլաւոր, աւելի թթու և պահպանման անյարմար. հիւսիսային երկիրներու մէջ այգիին հարաւային դիրքը աւելինպաստաւոր է:

Եթէ այգին արեւելեան կողմը նայի հիւսիսային երկիրներու մէջ գարնանային սառումէ մը վերջ առաւօտուն շատ մը հալելով՝ այգին կրնայ բաւական վաղ նստուիլ և շատ անգամ ալ բոլորովին ջնջուիլ եթէ մի քանի առաւօտ սառում

և հալում իրարու յաջորդեն:

Նոյնպէս արեւմտեան դիրքն ալ այգիի մշակութեան աննպաստ է, որովհետեւ փոթորիկներու ժամանակ այգին կրնայ շատ վնասուիլ. ուրեմն ամենէն նպաստաւոր դիրքն է հարաւայինը:

ՀՈՂԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ.— Հողին կացութիւնն ալ կ'ազդէ այգիներու մշակութեան. մեր երկիրներուն մէջ դաշտագետիկները, ձորերը յարմար են այգիի մշակութեան, որովհետեւ շատ բարեբեր հողեր են, բայց գինին քիչ ալքոլաւոր և բաց գոյն կ'ըլլայ. հիւսիսային երկիրներու մէջ շատ աննպաստ են. որովհետեւ ձորերու, միահարթ դաշտերու մէջ ձմրան և գարնանային սառումները աւելի շատ տեղի կ'ունենան քան այլուր. նոյնպէս քիչ ու շատ ալ խոնավ, անկային հիւսնդութեանց աճման կը նպաստեն:

Այգիի մշակութեան համար ամենէն յարմար և նպաստաւոր կացութիւնը բլրակներն են. արեւուն ճառագայթները աւելի ուղիղ կ'իջնան հողին վրայ. հողը շատ կը տաքնայ և այս տաքութիւնը ճառագայթացումով որթատունկին յարակից մթնոլորտը նպաստաւոր պայմաններու մէջ կը գնէ. նոյնպէս աւելորդ ջուրը շուտով կը վազէ կ'երթայ, որով անկային հիւսնդութեանց աւերները աւելի նուաղ են՝ քանի որ ոնկային հիւսնդութեան աճման նպաստող պայմաններէն մին՝ խոնավութիւնը կը պակսի:

Մեր բոլոր այգեպանները փորձով համոզուած են թէ բլրակներու կացութիւնը այգիի մշակութեան շատ յարմար է որով Լատին առածը կը հաստատուի, թէ՛


Bacchus amat colles
Այգին կը սիրէ բլրակները:

Ուրեմն հող մը այգեստանի վերածելէ առաջ պէտք է վերոգրեալ պայմանները նկատի առնել՝ կարելի եղածին շտի լաւ օգտուելու համար:

(Շար.)

Մ. Կ. ՄԱԿԱՔԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՆՕՅԵՐ



ՍԵՂՄԻՐԱՆԸ

Ըստ խոստմանս այս անգամ ալ սեղմի-
րանով (corset) պիտի գաղիմ, որմէ քաջ գի-
տեմ թէ չատ կը հետաքրքրուի իգական սե-
ռը համակ:

Ապաքէն ո՛րքան մեծ յանդգնութիւն պի-
տի ըսուի կանանց մէջ ջերմապէս սիրուած
և ընդունուած բանի մը վրայ ձայն բարձ-
րացնել. մահացու մեղքերէն մին գործել ա-
ւելի դիւրին պիտի ըլլար, չիտակը՝ Սակայն
նկատելով որ գիտունք փորձով հաստատած
և մատնանիչ ըրած են ստէպ սեղմիրանի վը-
նաները, հա՛րկ է ուրեմն լուռ մնալ և ան-
տարբերի դիրք մը առնել հանդէպ այդ վնա-
սուց, և զանոնք չծանօթացնել հանրութեան:
Կը յուսամ թէ օգտակար բայց աննշան ծառա-
յութիւն մը մատուցած պիտի ըլլամ սեղմիրանի
բազմակողմանի բացատրութիւնը տալու նպա-
տակն ունենալովս:

Ինչպէս որ գիտէք, սեղմիրան կ'ըսուի
փափկատուն սեռի հանդերձեղինաց այն մա-
սին որ սահմանուած է իրանը գրեթէ ամ-
բողջովին շրջապատելու, սեղմելու և այսպէս
մարմնոյն ձեւական նրբութիւն մը տալու:
Հաւատանք թէ սեղմիրանը՝ մարմինը նուրբ
ձեւի մը մէջ կաղապարելու յատկութիւնն
ունի, սակայն չը մոռնանք միեւնոյն ատեն ևս
անոր գործածութենէն առաջ եկած անհա-
մար վնասները: Կատարուած խել մը բժշ-
կական ուսումնասիրութիւններ, որոնք բեղմ-
նաւոր արդիւնքներն են գիտնոց ջանքերուն
եւ տքնութեանց և բնախօսական ողջ գիտել-
եաց վրայ հիմնուած են, մեզ կը հաստատեն
թէ անթիւ են այն կազմական թերութիւն-
ները որոնք կը ծնին սեղմիրանի տարապայ-
ման սեղմումներէն և անոր կիտոսկրեայ
կարծր կողերուն արտակարգ ճնշումներէն:

Մեր կիները, ինչպէս կը վկայէ համակ-
րելի գրագիտուհին Ս. Զարուհի, միշտ ար-
տասովոր ձգտում մը կ'արտայայտեն գեղե-
ցիկ և միանգամայն նուրբ երեւալու հան-
րութեան աչքին, կը ռեզմեն ու կը սեղմեն
չարաչար իրենց մէջքը և լանջքը մարմնապէս

նուրբ ձևանալու մարմնջէն բռնուած, ու
այսպէս կը պզտիկցնեն իրենց մէջքին և լանջ-
քին ծաւալը: Սակայն պէտք է գիտնալ, ազ-
նիւ քոյրեր, թէ մարդուս լանջքը որքան լայն
ըլլայ, այնքան աւելի դիւրաւ կը կատարուի
շնչառութեան և արենաշրջութեան գործո-
ղութիւնները, որոնցմէ առաջինը կողերով
շրջապատուած լանջականդակին (cage thora-
cique) մէջ բազմող և շնչառութեան կեդրոնն
համարուող թոքերուն մէջ կը կատարուի:
Իսկ երկրորդը արենաշրջութեան կեդրոնն
եղող մշտաբարախ սրտին մէջ: Երբ այս կեն-
սական պարտականութիւնները կատարող
գործարանները ճնշէք, գիտցէք թէ անոնց
գործողութեան թերի կատարման պատճառ
կ'ըլլաք, այո՛հնքն շնչառութեան համար պէտք
եղածին չափ օդ չէք կրնար ներշնչել ձեր
թոքերուն մէջ, այս պատճառաւ կ'ազային
փոխանակութիւնը (échange gazeux) անկա-
տար տեղի կ'ունենայ, ինչ որ աւելորդ է ը-
սել թէ թոքային և շնչառական հիւանդու-
թեանց շարժառիթը՝ կրնայ ըլլալ:

Հապա գիտէ՞ք երբ իրաննիդ ուժգին
կերպով բանտարկուած ըլլայ սեղմիրանին
մէջ, ի՛նչ ձիւներ կուգայ ձեր ստամոքսի
գլխուն, որմէ շատերնիդ կը գանգատիք յա-
ճախ. մարսողական գործողութեան խանգա-
րում, ստամոքսացաւ (gastralgie) ստա-
մոքսի ծաւալի նուազում, ստամոքսի
խառնուրդ (maussade) և փսխում, հետեանք-
ներն են սեղմիրանին՝ ստամոքսի վրայ ըրած
ճնշումներուն:

Երբ ստամոքսի վրայ կը խօսիմ, յիշողու-
թեանս մէջ կը ներկայանայ միջադէպ մը, ո-
րուն ականատես ըլլալու դժբաղդութիւնն
ունեցայ գրեթէ երեք ամիս առաջ: Զբօսաւայր
մը կը գտնուէի, ուր բարեկեցիկ դասակար-
գէ երկսեռ հոծ բազմութիւն մը կը գտնը-
ւէր. ինձ մօտակայ սեղանի մը շուրջը բազ-
մած ընտանիք մը որուն անդամներէն մին
գեղանի օրիորդ մը, յանկարծական անհան-
գստութեան ենթարկուած ըլլալու երևոյթին
մէջ կը գտնուէր. վայրկեանական դարմաններ՝
ջուր, կազէօզ ևլն. օգուտ չէին ըներ, և օ-
րիորդը տակաւ առ տակաւ նուազման նշան-
ներ ցոյց կուտար, երբ մայրը—հաւանական-
նաբար—սթափելով՝ սեղմիրանը թուցնել
պատուիրեց իր զաւկին, ինչ որ յի-
րաւի վերակենդանութիւն ստացնել տուաւ

աղջկան մէկ քանի վայրկեանի մէջ՝ Աղջիկը հաւանորէն ախորժակով մը ճաշելէ վերջ սեղմիրանը չափազանց սեղմելով պատճառ եղած էր ստամոքսային այդ յանկարծական վաղանցուկ խանգարման, ինչ որ կրնար աւելի դառն հետեւանքներու տեղի տալ:

Լեարդը ալ սեղմիրանի ճնշումներէն ազատ չէ, ան ալ կ'ազդուի և ուղղահայեաց տրամաչափը (diamètre vertical) մեծնալով, ձեւափոխութեան (déformation) ենթակայ կ'ըլլայ, նաև դէպի կուշտի փոսին (fosse iliaque) մէջ մղուելով տեղափոխութիւն (déplacement) ընելու ալ կը դատապարտուի:

Վերջապէս սեղմիրանի գործածութիւնը կրնայ տեղի տալ դեռ շատ մը անպատեհութեանց, ընդ որս ստինքային գեղձերու (glandes mammaires) և աւշային ուռիկներու (ganglions lymphatiques) զանազան հիւանդութիւններ, ստոծանի ընկրկում (refoulement du diaphragme), թոքային թեթև հիւանդութեանց սաստկացում, սրտի տրոփում (palpitation du cœur), նուաղում (syncope), արիւնաթքութեան (hémoptysie) տրամադրութիւն, որովայնի անձկութիւն, արգանդի հակում, դաշտանահոսութեան խանգարում, յղութեան ժամանակ վիժման տրամադրութիւն, սաղմի (foetus) անկատար անեցում, արգանդի տեղափոխութիւն և արիւնահոսութիւն: Ալ աւելին կայ, ամենէն ուշագրաւ և կարեւորը, ճնշարեքութեան ժամանակ քաշուած դժուարութիւնները, որոնք յաճախ կը վիճակին մեր կանանց ու կեանքի կ'սպառնան և մանկաբարձն «ֆոռսէքս» գործածելու հարկին մէջ կը ձգեն, կրնան վերադրուել սեղմիրանին արգանդի վրայ ըրած ճնշումներուն, որոնք ապահովաբար արգանդի անձկութեան պատճառ կ'ըլլան:

Ահա՛, ազնիւ, նթերցողուհիներ, սեղմիրանին վնասները, որոնք սկսածայ թոռն բերնէս, գիտնալով անշուշտ թէ՛ անոնք մէկ ակնթարթի մէջ պիտի մոռցուին և թերևս բնաւ արձագանք չի պիտի գտնեն ձեր մէջ: Այլ սակայն չի կարծէք նաև որ ներկայ յօդուածով զձեզ սեղմիրանէ հրաժարեցնելու դիտումն ու միտումը ունիմ, բան մը որ երեւակայել անգամ ամենամեծ տգիտութիւն ու անմտութիւն պիտի համարուի, այլ միայն կը հրաւիրեմ զձեզ որ գոնէ պէտք եղած չափով պատշաճօրէն սեղմելու կարեւորութիւնը

ըմբռնէք, որ մարմնական ու է տկարութեան ենթակայ չըլլաք:

Սեղմիրանը պէտք է սեղմուի այնպէս որ մարմնոյն ո'չ մէկ անդամը ճնշուի մը զգայ և ո'չ ալ ու է մէկ շարժումը արգիլուի: Նաև կ'առաջարկեմ որ դեռահաս օրիորդները սեղմիրան գործածելու չը հետապնդին. մէկ խօսքով, այդ սովորութեան չը վարժուին շատ կանուխէն, վասն զի շատ վնասակար է իրենց համար, միայն չափահասութեան ատեն կրնան գործածել՝ ցոյց տրուած պայմանով սակայն. իսկ յղութեան ժամանակ իսպառ պէտք է հրաժարիլ սեղմիրանէ:

Վերջացնելէ առաջ կ'արժէ նաև մէջ բերել թէ, բժիշկ մը, որուն անունը յիշողութենէս խոյս տուած է, բարոյական փորձով մը հասկցնելու համար թէ ո՞ր աստիճանի են սեղմիրանի վնասները, դիմած է հետեւեալ իմաստուն և ուշագրաւ միջոցին: Օրիորդի մը վրայ սեղմիրանի հասուցած չարիքները նշմարելով, անոր նուիրած է երկու համասեռ հոտաւէտ ծաղիկներ՝ անշուշտ օրիորդին գոհունակութիւն պատճառելով: Օրիորդը բժիշկէն ընդունած ծաղիկները չթառամելու, անոնց կենսականութիւնը քիչ մը ատեն ևս չը կորսուելու համար ցօղունները ջուրի մէջ դնելով պահած է. սակայն մեծ եղած է իր զարմանքը, երբ տեսած է թէ քսանկշորս ժամէ վերջ ծաղիկներէն մին թառամած եւ միւսն աւելի ևս բողբոջած է. երկար ատեն մտածելէ վերջ, աւաղ, չէ կրցած այս գաղտնիքին լուծումը գտնել, ու հետաքրքրութենէ մղեալ, ծաղիկները առնելով ուղղակի բժիշկին քով վազեր է այդ գաղտնիքին տեղեկանալու համար. բժիշկը, բարոյագէտ և մատուցէր անձնաւորութիւն մը, քմիծաղով մը թառամած ծաղիկին կեդրոնի մասը ցոյց տալով, աւելցուցած է թէ այս մասէն է որ ծաղկին անեցումը կախում սունի. «Տեսէ՛ք օրիորդ, այս մասը թելով մը գաղտնաբար կապուած և սեղմուած է, իսկ միւս ծաղկեալ ծաղիկը առանց կապի է, հետեւաբար և դուք, ծաղիկ հոգեզուարճ գեղոյ, կը նմանիք կապուած ծաղիկին, և երբ սեղմիրանի մոլի ըլլաք տակաւին, թառամեալ ծաղկին պէս ժամանակէն առաջ կանուխէն պիտի թարչամիք:

Սեղմիրանը ինչպէս որ ունի իր յոռի ու

քնասակար կողմերն, ունի նաև իբր դարման իր անուրանալի օգտակարութիւններն, որ մարմնական թիւրումներն ուղղելու մէջ կը կայանայ. այս կարգի սեղմիրաններու մարմնողական սեղմիրան (corset arthopédique) կըսուի, որ կուզութիւնն և cypose, lordose, scoliose կոչուած կազմական բայց ողնայարի (colonne vertébrale) կորութիւնները չուկելու յատկութիւնն ունին:

Ա. ԽԱՆՃԵԱՆ

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ԱՐԱԲԵՐԷՆ ԼԵԶՈՒՆ. — ՊԱՏՄԱԿԱՆ ԱՊԱՑՈՑՅՆԵՐ
ԻՐ ԱՌԱԽԵԼՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ

Սոյն լեզուն՝ որ խօսուած լեզուներուն չարքին մէջ է՛ն ճոխերէն մին է սանսկրիտէն վերջ՝ Օսմանեան լեզուին բառերու և կանոններու ահագին պաշար մը հայթայթած ըլլալուն համար, անտարակոյս Օսմաներէնի ամէն հետամուտ, ամէն ուսուցիչ անհրաժեշտ հարկ կը զգայ իւրովսանն ուսումնասիրելու: Արաբ լեզուն ուրաղի բուրաստան մ'է՛ ճոխերանգ բերազան ծաղիկներու՝ զորս լիարուն քաղել ա՛յնքան դժուար է՝ որքան տաժանելի է անծայրածիր Սահարային մէջ ուղխիներ փնտռելը: Մենք բնա՛ւ յաւակնութիւն չունինք այս անսահման լեզուին վրայ խորին ուսումնասիրութիւն մ'ըրած ըլլալու, ինչ որ գրքերէ ու գրական թերթերէ կրցած ենք քաղել իբրև տեղեկութիւն ա՛յն միայն պիտի ջանանք պատկերացնել՝ յուսալով որ եթէ ներկայս լեզուաբանական հայեցակէտով դուզնաքեայ աշխատութիւն մ'է՛ գէթ արաբերէնի հետեող մեր ուսանողներուն կողմանէ հետաքրքրութիւն մը պիտի արժէ: Եւրոպիոյ գիտնականներն ինչպէս կը կարդանք. ոչ սակաւ ժամանակէ հետէ «սեմական գաւառաբարրառները»՝ այսինքն Ասիա և Ափրիկէ ասլորող ցեղերուն, ժողովուրդներուն լեզուներն ուսանելու համար լուրջ ջանքեր կ'ընեն. արաբերէնն ալ այդ բարբառներէն մին է: Սոյն լեզուն սեմական գաւառաբարրառներէն ածանցեալ ըլլալուն պատճառաւ՝ իր

եղբայրներն համարուած սեմական լեզուաց հետ կենդանի մնացած և անոնցմէ ժառանգաբար վայելած զարգացումներէն չգոհանալով, անցեալ ժամանակներուն աշխարհի վերջին եզրը նկատուած Սպանիոյ՝ Նոյնպէս եւ Եւրոպայի հարաւային ու Ափրիկէի բոլոր հիւսիսային կողմերը տարածուած և վերջապէս մինչև Ռուսիոյ Բազան քաղաքը գտնուած աշխարհին շատ կողմերը տարածուած է: Նախնի արաբները բանաստեղծութենէ զատ գլխաւորաբար յիշատակելի բան մը չունին. այս բանաստեղծութեամբ է որ իսլամութեան ծագումէն առաջ դիցապաշտական հին ժամանակներու (زمان جاهليت) բոլոր դէպքերն ու նշանաւոր անձերը ծանօթացած են: Կը պատմուի թէ Արաբք քերթողութիւնը իմաստութեան չքնաղ մատեան մը կը համարէին, որուն համար, եթէ չեմ սխալիր, թերևս ըսուած է սա խօսքը թէ «Նիմէշ էնիս էլքիթապուն նէֆիս» (Ի՛նչ սիրուն ընկեր է ընտիր մատեանը): Ապոլլոնի քնարն ա՛յն աստիճան կը սիրուի եղեր որ անձնական արժանիքի, ազնուականութեան, ճակատամարտի տեսակէտով եթէ մէջերնին հակառակութիւն ծագէր, անոր (բանաստեղծութեան) դիմելով դժուարութիւնները կը հարթեն եղեր: Բաց աստի՛ բանաստեղծութիւնն արաբներուն ուսմանց հաւատարիմ գրապահը, բարքերու հաւաքածոն ու տարեգրութեանց գանձարանն եղած է: Արաբաց թանկագին քերթուածներէն այն եօթն տաղերգները (مقامات), — որոց իւրաքանչիւրը ծայրագոյն հետեորութեան ու բանաստեղծութեան մէյմէկ նմոյշներ են, — ճարտասանութեան հրապարակին վրայ ստացած այն գերիվեր արժէքին իբրև նշանակ Պապայի (Քէպէ) մէջ կախուած են: Ահաւասիկ այս եօթ քերթողական հրաշակերտներուն հեղինակներն, (عمرو) (ليد) (اعشى) (نابغة) (زهير) (امرؤ القيس) (مطرحة): Արաբներն իրենց սեպհական Բերականութեամբ ու Համաձայնութեամբ լեզունին կատարելագործած են: Գաղղիացի մեծանուն բանասէր էրնէսթ Ռընան «Արաբ լեզուն առանց մանկութեան չըջան բոլորելու երիտասարդ վիճակով մը յերևան եկած է» ըսած է: Եթէ արաբ լեզուին առանձնայատուկ Բերականութիւնն ու Համաձայնութիւնը չըլլար՝ չպիտի կրնար անվթար մնալ: Միայն թէ (سيبويه) էն աւելի առաջ եկած Հա-

մաճայնութեան հմուտ մէկը չգիտցուիր»
կը յայտարարէ նշանաւոր արարագէտ մը.
այս ականաւոր անձին գիրքը գերման արե-
ւելագէտ Տրէնպուրկի միջոցաւ տպուած է:

(الوجوه) իր սոյն աշխատասիրութեան մէջ
շատ մը կանոններ նախնիքներէ քաղած ըլ-
լալը մասնաւորապէս կը յիշէ: Արարեբրէն բա-
ռերն երկու մասի կը բաժնուին, զուտ և ա-
րարացեալ (الوجوه). այս լեզուին ընտրելա-
գոյնն է Գուրէշեան բարբառը:

Արար գանազան ցեղերէ մարդիկ կարա-
ւաններով նուիրական քաղաքը ուխտի եր-
թալով, իրենց ծանօթութեանց պաշարը Գու-
րէշեաններուն առջև կը դնէին՝ և Գուրէշ-
եանն էր որ իրաւընտիր կը կարգուէր: Գու-
րէշեանք իրենց ընտիր գաւառաբարբառը ու
արտայայտութեան նուրը ձեւերն ունենալով
հանդերձ, իրենց մօտ եկող ճարտարախօս-
ներուն, պուշտներուն բանաստեղծութիւն-
ներէն ու տաացուածներէն ճաշակունն ե-
կածներն կը քաղէին: Ահա այսպէս Գուրէշ-
եանք արարներուն է՛ն դեղեցկաբան ցեղն
էին իրենց կոկուած բարբառով: Արարեբրէնի
մէջ արար չեղող բառերն հետագայ նշան-
ներով կը հասկցուին, նախ՝ երբ բառը արա-
բերէնի քերականական ձեւերէն կամ բառե-
րու կազմապարհներէն (أوزان عربي) դուրս գըս-
նուի. Բ. երբ բառի մը սկիզբը (նուն) և
(նուն)էն վերջը (րա) գտնուի. Գ. երբոր բա-
ռին վերջը (տալ)էն ետք (զա) գտնուի. Դ.
երբ բառին մէջ (սառ) և (ճիմ) միատեղ գան.
Ե. երբ բառին մէջ (ճիմ) և (գաֆ) մէկտեղ
ըլլան. Զ. երբոր բառը հնգատառ և քա-
ռատառ ըլլայ՝ ու (أوزان حرف) կոչուած (պա)
(րա) (ֆա) (լա՛մ) (միմ) և (նուն) գրերն մին
չգտնուի, այն բառը արարեբրէն չէ. (էպու
իւննասր ֆարապի) այսպէս կ'ըսէ, Իսին Սէ-
յեհիտ ալ Վզուտ արարեբրէն բառի մը մէջ (լա՛մ)
էն վերջ (չին) չգտնուիր, արարեբրէնի մէջ
ընդհանրապէս (չին)երն (լա՛մ)էն առաջ կը
գործածուին՝ ըսած է: Արարաց լեզուական
օրէնքներուն մէջ ինչ ինչ փոփոխութիւն կը
տեսնուին՝ որոնք անտարակոյս խել մը կա-
րելորդ դէպքերու արդիւնք են:

Արարք ամէնէն աւելի իրենց բարբառին
կատարելութեան ջանահնար եղած են, լե-
զուին պատուած՝ ու բարձրացուցած են: Ա-
րարեբրէն լեզուն իր ածանցումներն, նախ-
նական կանոններն պահած՝ և ուրիշ գաւա-

ռարարաւորներէ, լեզուներէ քաղած կանոն-
ները պատշաճօրէն գործածելէն ի զատ զա-
նունք ընդլայնած իսկ է. զօր օրինակ, արա-
բերն երկուրական (թէսնիէ)ն երբայեցէրէ-
նէն առած են. երբայական լեզուին մէջ կ'ի-
մանանք որ «թէսնիյեէ»ն միմիայն «անուն»ի
մէջ ի կիր կ'առնուի եղեր՝ մինչ արարները
սոյն կանոնը բայերու մէջ գործածած են:
Իպնի Ֆարիս այսպէս կը յայտարարէ. «Արար
լեզուն ա՛յնպիսի խորին ու անսահման ծով
մէ՛ջ որ աշխարհի բոլոր լեզուները կը գերա-
զանցէ»: Օրինակի համար (ուշտ) նշանակող
5744 նոյնանիշ բառեր կան. գինիի համար
125 և թուրի համար ևս 500 բառ կը
գտնուի: Ուշտի, նժոյգի ու «արկատեան
նժոյգի»՝ բնութեան համար այսպէս շատ
մը բառեր գտնել զարմանալի չէ, որովհետեւ
արար ցեղերն իրենց առեւտրական ուղևորու-
թեանց ու արշաւանաց ժամանակ հեռաւո-
րութեան միջոցը աւազուտ լինելուն պատճա-
ռաւ ուղտէն գառ ուրիշ կենդանի չէին հեծ-
նէր, կը պատմուի թէ արարները կենդանի-
ները վաւկի չափ կը օրէնէին. աւասիկ անոր
համար է որ իրենց գեղանի աղջիկներն ու
պարմանուհիներն սպիտակ ուղտի՝ և անոնց
հրաշող ականոզիքը Վիթի աչքերուն և այլոց
նմանցուցած են:

Հարուն էլրաշխտներու, Մէ՛մուններու բա-
ռաշատ բարբառին վրայ՝ մեր գիտակցարար
քաղած տեղեկութիւններն ասոնք են: Փա-
փաքելի է որ մեր հմուտ պաշտօնակիցներէն
անոնք՝ որք սոյն լեզուին խորապէս թա-
փանցած են՝ ի հանդէս բերեն արար իմացա-
կանութեան իմաստից վարդերն՝ որոնք ա՛յն-
քան հեշտաբոյր են և երբձապան՝ որքան
բուրուցմաւէտ և այլազան էին ծաղկունք
«Իրէմ»ի:

Աւմաշ

Ս. Խ. ՅԱՊԱՔԵԱՆ

Օսմ. Ուսուցիչ Գրեթանուց

Կը խնդրուի մեր Պատ. Գործակալութիւն-
ներէն և Յարգոյ Բաժանորդներէն, որ բա-
րեհաճին Նոր Տարին առաջ յետնեալ բաժ-
նագինները զրկել: Այս առթիւ կը յիշեցնենք
նաև մէկ քանի բաժանորդաց այն խոստում-
ները, զորս ըրած էին նամակով, քիչ օրէն
իրենց բաժնեգինը զրկելու մասին:

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏՆԵՐ

ՔԱՅԱԽ

(Պարտաւ 44 թիւ հարցում)

Երբ խաղողը հասունցած է, կը ժողվենք, կը ճզմենք և կ'ընդունինք շաքարահամ եւ քաղցր հեղուկ մը որ «քաղցու» (չիրա) կը կոչուի։ Այս քաղցուն քիչ օրէն կ'սկսի տաքանալ, եռալ, նոյնպէս օր ըստ օրէ իր համն ալ կը փոխուի և վերջապէս շաքարի տեղ այժմ կը պարունակէ ալբոլ, ու մեր քաղցուն այլեւ գինի կը կոչուի։ Քաղցուն եռացումը ու շաքարին ալբոլի փոփոխումը յառաջ կուգան փոքր մանրէի մը շնորհիւ որուն գործունէութիւնը կը կոչուի խմորում (fermentation)։

Առեւնք այժմ ամանի մը մէջ այս գինիէն մաս մը ու օդին հազարդ թողունք. քիչ ժամանակէն դարձեալ խմորում մը տեղի պիտի ունենայ։ Այս խմորումը կը կոչուի Քացախային խմորում (fermentation acétique), որուն շնորհիւ գինին կ'սկսի այլալիւ, ալբոլը կը խմորի, կը քացխի ու յառաջ կը բերէ խմորումած, թթու գինի մը, զոր կը կոչենք ՔԱՅԱԽ։

Գինին, գարեջուրը, խնձորօղին, տանձօղին, հասարակ ալբոլները կրնան քացախային խմորման շնորհիւ քացախի վերածուիլ։

Քացախին խմորումը յառաջ կուգայ օդին մէջ գտնուող սնկային մանրաբոյսի մը սփռուներէն, որուն գիտական անունն է Քացախի Յուսիկ (Bacillus կամ Micoderma aceti) և հասարակօրէն կ'ըսուի «Քացախի Մար» (mère de vinaigre), քացախային մարը քացախի տակառներու մակերեւոյթին վրայ տեսնուած կէս թափանցիկ, լարծուն թաղանթակերպ նիւթն է։

Քացախի մը յատկութիւնները, համը, հոտը, գոյնը և նոյնիսկ կծուութիւնը կը տարբերին քացախը արտադրող մարմիններու տեսակին համեմատ։ Առ հասարակ քացախի մը պարունակած քացախային թթուն (acide acétique) հարիւրին 10ը չանցներ, ի բաց առեալ այն քացախները որոնք պարտին ծովային կամ հողային երկար ճամբորդութիւններ

ընել։ այս պարագային մէջ քացախները մինչև հարիւրին 12 քացախային թթու կը պարունակեն։

ՏԱՐԲԵՐ ՔԱՅԱԽՆԵՐ։—Գինիէ յառաջ եկած քացախը ամէնէն լաւը, կծուն և յարգին է։ Գոյնը դեղնագոյն՝ եթէ քացախը արտադրող գինին ճերմակ կամ դեղնագոյն է, և կարմիր՝ եթէ քացախը յառաջ բերող գինին կարմիր կամ սև է։ Գինիներու խմորումով յառաջ եկած քացախներու չոր արտամուգը (խիւլասա, extrait sec) շատ մ'ուրիշ տարրերէ (աղեր) զատ կը պարունակէ նաև «քօդասային երկգինեմորատ», (bitartrate de potasse) որ այս տեսակ քացախներու յատկանշական մէկ տարրը պիտի ըլլայ։ Եթէ կարող չըլլայինք արհեստական կերպով այս տարրը միւս բոլոր տեսակ քացախներուն մէջ մուծանել։

Երբեմն քացախը կծու ընելու համար շատ մը խարդախութիւններու կը դիմեն։ Օրինակի համար տեսակ տեսակ թթուներ (acides) կ'աւելցուն, թթուներ՝ որոնք թէ՛ առողջութեան կը վնասեն և թէ՛ քացախին մասնաւոր համը կը նուազեն։ Օրինակի համար շատ նպարաւաճառներ կամ գինեպաններ իրենց քացախին ու ծ տալու համար, այսինքն կծու ընելու համար, քացախին մէջ կ'աւելցնեն ծըծրմբային թթու (acide sulfurique), որուն գոյութիւնը կը յայտնուի «ծանրահող» (baryte) պարունակող աղերով։

Երբեմն քացախները կը խարդախութիւն քլորաջրային թթուով (acide chlorhydrique)։ Այս պարագային մէջ ինչպէս նաև ծծմբային թթու պարունակած ժամանակ «մէթիլանիլին» (méthylaniline*) մանիշակագոյն հեղուկը «կանաչի կը վերածուի։

Երբեմն ագահ քացախաւաճառներ քացախին քանակութիւնը չափենելու համար կը «մկտեն», այսինքն ջուր կը խառնեն, և այս վարպետորդիները աւելցուած ջուրի մեծ քանակութիւնը ծածկելու համար շատ անգամ ջուրին հետ գինեմորային թթու (acide tartrique) կ'աւելցնեն։ Այս խարդախութիւնը չուտով մէջտեղ կ'ելլայ, որովհետև քացախին խտութիւնը կ'աւելնայ՝ աւելցուած գինեմորային թթուի քանակութեան համեմատ։

(*) Méthylanilineի ֆօռմուլն է— $\text{O}_6\text{H}_5\text{—AZH OH}_3$ ։

Օրինակի համար առնենք հասարակ քաղախ մը՝ որուն մէջ դնենք թթուաչափ (pèse-acide) գործի մը, պիտի տեսնենք որ այս գործիքը պիտի ցուցնէ 2.20 աստճ. արդ, եթէ այս քաղախին մէջ հարկւրին 1 համեմատութեամբ գինեմրային թթու աւելցնենք, թթուաչափ գործիքը պիտի ցուցնէ 2.80 և եթէ հարկւրին 2 համեմատութեամբ գինեմրային թթու աւելցնենք, գործիքը պիտի ցուցնէ 3.40. հոս կը տեսնենք որ հասարակ քաղախ մը 2.20 է, իսկ եթէ գինեմրային թթու աւելցնենք, խտութիւնը կը բարձրանայ:

2. Խնձորօղիի և տանձօղիի քաղախը դեղնագոյն է և քիչ մը անոնց համը ու հոտը ունի. այս ալքոլաւոր մարմիններէ յառաջ եկած քաղախը գրեթէ բնաւ գինեմրուր (tartre) չպարունակեր ու իր չոր խաշուած խնձորի կամ տանձի համն ունի:

3. Գարեջուրի քաղախը դեղնագոյն է և քիչ մը լեղի համ ունի և չոր արտամուզը քաղախի ծաւալի հարկւրին ծին կը համապատասխանէ:

4. Ալքոլէ յառաջ եկած քաղախները սպիտակ, այսինքն անգոյն են, և չոր արտամուզ գրեթէ բնաւ չունին:

5. Փայտն ալ թորելով կրնանք պատրաստել քաղախ որ ոչ գինեմրուր և ոչ ալ արտամուզ կը պարունակէ:

ՔԱՑԱՅԻ ՄԸ ՊԱՐՈՒՆԱԿԱՆ ԹԹՈՒԻ ՔԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՈՐՈՇԵԼ. — Քաղախի մը մէջ գտնուած թթուի քանակութիւնը որոշելու համար կրնանք դիմել Ռէվէյլի (Révill) քաղախաչափային հեղուկին (liqueur acétimétrique), այս հեղուկին մէկ լիդրան կը պարունակէ 45 կրամ ոսկեքորակ (borax), որուն վերայ պէտք է աւելցնել այնքան այրող օշնան (soude caustique) որուն 20 խորնդ. սանթիմետրն կարող ըլլայ 4 խորնդ. սանթիմետր ծծմբային թթու չեզոքացնել: Այս քաղախաչափ հեղուկը «դուռնըսօյի» (tournesol) հեղուկով կապոյտ կը ներկուի: Առնենք օրինակի համար 4 խորնդ. սանթիմետր քաղախ որուն պարունակած թթուի քանակութիւնը կ'ուզենք խմանալ. ասոր վրայ աւելցնենք կամաց կամաց քաղախաչափային հեղուկ, որ գտնուի խորն. սանթիմետրի համեմատութեամբ աստիճանաւորուած խողովակի մը մէջ—մինչև որ այլեւ չկարմրի. խողովակին մէջէն պակասած հեղուկին քանակութեան հա-

մապատասխանող թիւը կը ներկայացնէ 100 մաս քաղախին պարունակած թթուի քանակութիւնը:

Ռէվէյլի քաղախաչափային հեղուկին տեղ կրնանք նաև գործածել լուծուած այրող օշնանի հեղուկը:

Կան նաև քաղախաչափ կամ թթուաչափ գործիքներ որոնք շատ անգամ ոխալ տեղեկութիւններ կուտան, քանի որ քաղախի մը խտութիւնը կրնայ այլեայլ պատճառներով փոխուիլ, որով մանրակրկիտ հաշիւներու համար այս գործիքներու գործածութիւնը յանձնարարելի չէ, բայց գործնական աշխարհի մէջ ուր մօտաւոր թիւ մը կ'ուզենք գիտնալ, կրնանք այս փոքրիկ գործիքներուն աջակցութեան դիմել, գործիքներ՝ որոնք շատ պարզ, աժան և դիւրաւ փոխադրելի են:

ԱԼԿՈՒԱԻՈՐ ՀՆՂՈՒԿՆԵՐՈՒ ՔԱՑՆԵՑՈՒՄԸ (ACÉTIFICATION). — Եթէ կարողանանք ունենալ միջոցաւ օդին թթուածինը ալքոլին վրայ հաստատել, ալքոլը պիտի վերածուի քաղախային թթուի (acide acétique) և պիտի ունենանք «քաղախ»:

Տօպէռայնէն (Doëbereiner) կը յաջողի փոքր քանակութեամբ թթուածինը ալքոլին վրայ հաստատել բլաթինի փուշոյ (noir de platine) շնորհիւ. բայց այս միջոցով ալքոլի զգալի կորուստ մը կ'ըլլայ, որով գործնական աշխարհի մէջ բնաւ չգործածուիր: Բասդէօն, աշխարհահռչակ անոմալ մանրէագէտը, առաջին անգամ ըլլալով ճանաչեալ թէ օդին թթուածինը ալքոլին վրայ կը հաստատուի մանրադիտային բոյսի մը շնորհիւ գոր. մկրտեց «քաղախային ցուպիկ» (mycoderma acéti) անուամբ: Եթէ դիտենք քացիտելի հեղուկ մը, մակերեւոյթին վրայ պիտի նշմարենք մասնիկներէ բաղկացած միակերպ, թեթեւ սպիտակ քօղ մը, որուն իւրաքանչիւր մասնիկը մանրէ մ'է. այս մանրէն կ'իւրացնէ մեծ քանակութեամբ թթուածին և զայն կը հաստատէ ալքոլին վրայ: Բասդէօնի մէկ փորձին կը հետեւնենք թէ այս քաղախային ցուպիկները 30 ժամուան մէջ իրենց ծանրութեան 185 անգամէն աւելի թթուածին հաստատած են ալքոլին վրայ:

Քաղախի խմորամանրէները համրիչի ձեւով մէջտեղէն քիչ մը նեղցած մանրէներէ կը բաղկանան. իւրաքանչիւր քաղախամանրէ 3—

4 հազարերորդ միլիմետր երկայնութիւն ունի և իբր տրամագիծ 1—1.15 հազարերորդ միլիմետր:

Քացախամանրէն մասնաւորապէս հիւսնալի կերպով կ'աճի և կը բազմանայ քիչ մը քացախային թթու պարունակող հեղուկներուն մէջ. բայց իր ձեւը երկու է. եթէ քացախամանրէն ալքոլաւոր հեղուկի մակերեւոյթին վրայ մշակուի, այսինքն օդին հաղորդ դառնալի, սպիտակ քօղի մը ձեւն ունի և ալքոլը կը վերածէ քացախային թթուի ու մանրէն կը կոչուի «քացախային ցուպիկ» կամ «քացախամանրէ»: Իսկ եթէ քացախամանրէն աճի հեղուկին մէջ (կեղրոնը), մանրէն ալքոլը քացախային թթուի վերածելու տեղ յառաջ կը բերէ ջուր և ածխային թթու և այս մանրէն կը կոչուի Գինիի ցուպիկ կամ Գինեմանրէ (Micodermis vini): Ուրեմն զգուշութիւն ընելու է որ այս երկրորդ ձեւը գոյութիւն չունենայ. առ այս քացախի վերածուիլէ հեղուկը պէտք չէ երերցնել ու տեղափոխել որպէս զի հեղուկին մակերեւոյթին վրայ դառնալու մանրէներու քօղը հեղուկին մէջ չերթայ:

ՍԻՆԻՔԻ
(Շ-ր-ա-ն-ի-ն)

Մ. Կ. ՄԱՆԱԲԱՆ

ՈՐՈՎԱՅՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

ՈՐՈՎԱՅՆԱԽՕՍ ԸԼԼԱԼՈՒԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԸ

(Շ-ր-ա-ն-ի-ն-ի-ն Ի-ն-Յ-Յ)

2.

Իբր կ'ուզենք որ ձայն մը ըստ երևու-թիւն ցած տեղէ մը արձակուի, պէտք է գլուխը դէպի վար ծռել, հիմա որովայնախօսը գիտէ ձայններ հանել հեռաւոր, բարձր կամ ցած կէտէ մը, բայց այս ձայները պիտի կրնան գալ սրահին ո՛ր և է մէկ կէտէն:

Հոտ բացարձակ անկարելիութիւն մը կայ. փափաքուած պատրանքը լրացնելու համար, պէտք է որ որովայնախօսը ըլլայ ունկնդիրներուն և այն կէ-

տին մէջտեղ՝ ուսկից կ'ուզէ որ ձայն մը գայ:

Նախորդ թուին պատկերը կը ցուցնէ այն ուղղութիւնները, դէպի ուր որովայնախօսը կրնայ արձակել իր ձայնը: Ութող ըլլայ որովայնախօսը. եւ Ա. ունկնդիրը. Ո՞ն պիտի կրնայ տալ պատրանքը թէ ձայն մը կուգայ 1ի և 12ի միջեւ եղած ուղղութիւններու մէկէն. բայց եթէ 13էն 16 ուղղութեանց համար փոքրէ, ձայնը իր ունկնդիրներուն ականջին պիտի հասնի իրմէ եկածի պէս և բաղձացուած արդիւնքը չպիտի հայ-թայթէ:

Վերջապէս աւելցնենք որ, թէ՛ հեռաւոր և թէ՛ մերձաւոր որովայնախօսութիւններու համար, պատրանքը տեղի պիտի ունենայ շարժուածներու եւ նախապատրաստական խօսքերու շնորհիւ. լաւ է առաջուց իմաց տալ թէ գետնի տակէն տանիքէն կամ արկղէ մը ձայն պիտի լսուի, ձայնը ականջին հասնելէ առաջ երեւակայութեան վրայ ճնշում մը բանեցնելու համար:

Որովայնախօսական արուեստին (*) բոլոր գաղտնիքները պարզեցինք, ուշադիր այս փոքրիկ դասընթացքին հետեւող ընթերցողը պիտի կրնայ ըմբռնել այս տաղանդը ստանալու համար կիրարկելի մէթոտները: Շատ դիւրին կը սովորի ուղողը, ինչպէս ըսինք սկիզբը, այն ալ եթէ ճշտիւ մեր խորհուրդներուն անսայ՝ քիչ ժամանակի մէջ կ'ըլլայ պատուական որովայնախօս մը, բաւական է

(*) «Որովայնախօսութեան» մասին գրուած է նաեւ «Յոյս»-ի (1869 Գ. տարի, էջ 373) մէջ Ռ. Գ. ի կողմէ՝ մեր թարգմանածէն քիչ տարբերութեամբ:

Ահա՛ անոր վերջաբանը. — «Այսպիսի որովայնախօսներ հիմա բաւական չափ կան, եւ իրենց այս յատկութեան համար ալ ուրիշ բան մը չըսուի բայց եթէ բնական ձիւք մը՝ արուեստով կատարելագործուած»: էջ 376 Ծ. Թ.

որ ձայնին մէջ ճկնութիւն գտնէ:

Թարգմ. «La Solence pour tous» էն .

ՄԻՆՐ

* * *

—Ձի մոռնա՜նք մեր տաղանդները:

Բերացիներուն քաջածանօթ է Գուրպան Յուսէփը (*) իբրեւ հայ որովայնախօս: Ասոր մասին կը պատմուին շատ հետաքրքրաշարժ մանրավէպեր՝ Մէն Ժիլին եւ Բոնդիներուն նման: Անգամ մը ընտանեկան զուարթ ակումբի մը մէջ, յանկարծ լսելի կ'ըլլայ 30—40 թռչուններու համագեղգեղանքը. ոչ ոք կը կարծէ թէ կատակաբան Յուսէփն ըլլայ այդ սքանչելի ներդաշնակութեան յօրինողը: Ուրիշ անգամ, Բերա, տուն մը հիւր կ'երթայ. անակնկալներու սիրահարը տափակ զուարճաբանութիւններէ վեր կը գտնէ գեղեցիկ միջոցմը՝ ապշեցնելու ամէնքը: Եւ ահա՛ պատուհանէն կուգան պէս պէս ձայներ, հաստ ու ցած, նուրբ ու կերկերուն. հօտի մը միախումբ մայիւնն է ան. ամէն մարդ պատուհան կը վազէ, և ամայութիւն տեսնելով դուրսը՝ խաբուած լինելը կ'զգայ:

Դարձեալ օր մը Բումէլի-Հիսար, երեկոյթի մը փայլ տալու համար ճարտարօրէն կը կիրարկէ իր արուեստը. մօտէն կ'իմացուի շունի մը «հավ հավ»ը. ամբողջ շուներն են հաջել կ'սկսին. արուեստահանդէս մը հաչիւններու քրքիջը կը բրդի:

Կրնայինք շարունակել դեռ, բայց այսչափն ալ կարծեմ կուտայ գաղափար մը հայ սրամիտ տաղանդին վրայ: Ո՛րքան տաղանդներ կան ծածուկ: Գուրպան Յուսէփ թէեւ ժողովրդական դէմք մը, սակայն պէտք եղածին պէս չէ ճանչցուած. կ'արժէ իր կենսագրութիւնն ընել գիտական ձևի տակ, որպէս զի նոր սերունդը լիուրի տեղեկանայ իր գործածած մասնաւոր եղանակներուն: Ա՛լ ատենը չէ՞ ուսումնասիրելու մեր վարպետ արուեստագէտները. թերութիւն մըն է անտեսել զանոնք, թերեւ օտարազգիները մենէ աղէկ կը ճանչնան մերիները. արժանապատուութիւն ունենանք քիչ մը:

ՆՈՅՆ

(*) Տաճկերէն լեզուով հայատառ գրած է ԲԵՐԱՅԻ ՄԵՄ ՀՐԴԵՂ (Վէպ):

ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍԱԿԱՆ

Անդեղէները երկար ատեն պահելու միջոցները

Եռացման գործողութիւնը լրացած պահուն, (որ պահածոներու տեսակին համեմատ 10 վայրկեանէն մինչեւ 2 ժամ կը տեւէ), կափարիչներու ծակերը կը գոցեն հետեւեալ կերպով: Առաջուց մածոյցը (լէհիմ) մանր կտորներու կը վերածեն, գրեթէ արծաթ քսաննոցներու խոշորութեամբ, կամ քիչ մը պզտիկ և մէկ հազ.մէթր (միլիմէթր) հաստութեամբ. ուսանք դիւրութեան համար, մածոյց երկաթով «հավեա» մանր գնտակներ կը պատրաստեն մածոյցէն. ինչպէս որ ալ ըլլայ մածոյցի կտորներու ձեւը, պէտք է միշտ ծակէն գոնէ երկու անգամ խոշոր ըլլայ. իւրաքանչիւր տուփին կափարիչին ծակին վրայ մէկ մէկ մածոյցի կտոր կը դնէ մէկը, եւ ուրիշ մը հետզհետէ տաքցած մածոյց երկաթով (որու ծայրը հաստ և բուրձ «թօպա-ճի պէս» ըլլալու է), այդ կտորներուն դրպելով, կը հալեցնէ և ծակերը կը գոցէ: Մածոյց երկաթը թէ չափազանց տաք ըլլալու չէ, որ մածոյցը սաստիկ հեղիւնալով տուփին մէջ չվազէ. բայց ուշադրութիւն ընելու է որ առանց ծակ մնալու, աղէկ մը գոցուի: Մակերը գոցուելէն անմիջապէս վերջը, տուփերուն կափարիչները կ'սկսին դէպ ի դուրս ուռիլ, եթէ փակած տեղուանքը ծակ մնացած չէ. հակառակ պարագային, կափարիչները շիտակ կը մնան, եւ ուր որ ծակ մնացած է, անկէ շոգին կ'սկսի ուժգնօրէն դուրս ելլել, զոր իսկոյն գոցել պէտք է: Երբ տուփերու կափարիչները այսպէս ուռին, այն ատեն կաթսան կրակէն վար կ'առնեն, և կամ դիւրութեան համար, եթէ կաթսան մեծ է, կրակը կը քաշեն: Արդէն այս գործողութեան համար մեծ կաթսաներ չեն գործածեր: Ուսանք տուփերը առաջուց կը շարեն մասնաւորապէս պատրաստուած մետաղոտայնէ «թէլ գաֆէս» կողովներու մէջ, և այնպէս կ'իջեցունեն կաթսաներուն մէջ, ուր կը շարեն քով քովի. եւ երբ կրակէն վար առնել պէտք ըլլայ, կողովները մէկիկ մէկիկ կաթսաններուն մէջէն կը հանեն, եւ կը դետեղեն յատկապէս շինուած սեղան-

ներու վրայ, Երբ տուփերը պաղին, կափարիչները ալ հետզհետէ գողաւոր ձեւ մը կ'առնեն. այսինքն եզերքներէն դէպի կեդրոնը ներս կը գողին, եթէ գործողութիւնը տղէկ կատարուած, եւ երբէք ծակ մնացած չէ: Այն պարագային երբ կը տեսնէք թէ, կափարիչները ուռած մնացած են, և պաղեղէն վերջն ալ չեն գողիր, գործողութիւնը աղէկ կատարուած չէ, եւ անպատճառ տեղ մը ծակ մնացած ըլլալու է, որ այս պարագային, ծակը գտնալով նշան ընելու և գործողութիւնը նորէն սկսելու է: Եթէ այս նախագիշտութիւնը չընէք, ձեր պահածոնները չեն դիմանար, եւ քիչ ժամանակէն կ'աւրուին: Տուփերը սլաղեղէն վերջը աղէկ մը չորցնելու և այնպէս պահելու է որ չի ժանգոտին:

Յաջողութեան գլխաւոր պայմաններէն մէկն ալ սա է որ, եռացման աստիճանը 100ը անցնելու է. և որովհետեւ պարզ ջուրը արդէն 100 աստիճանին կ'եռայ, եւ երբէք անկէ վեր չեւար, ուստի պէտք է ջուրին մէջ խառնել այնպիսի նիւթեր, որոնք եռացման աստիճանը բարձրացնելով ըստ կարելոյն մօտեցնեն 110 աստիճանի: Ոմանք 25 օխա ջուրին 1 օխա աղ կը դնեն, որ ջուրին եռացման աստիճանը կրնայ բարձրացնել մինչեւ 105ի: Ծովեզերքի մօտ քաղաքներու կամ գիւղերու մէջ կրնան գործածել ծովու ջուր: Ուրիշներ (Սիւթէմ ֆաթիէ) 100 օխա ջուրին մէջ կը խառնեն 4 օխա աղ եւ 5 օխա շաքար, և շնորհիւ այս խառնուրդին, ջուրի եռացման աստիճանը մինչեւ 110ի կը բարձրանայ: Բայց որպէս զի եռացման այս աստիճանը դիւրաւ ձեռք բերուի, եւ շատ վառելանիւթ (փայտ, ածուխ, ևն.) չի գործածուի, պէտք է գործողութիւնը հետեւեալ կերպով կատարել: Երբ տուփերը գետեղէք կաթսաներուն մէջ, վրանին թաց լաթ մը ծածկեցէք, յետոյ կաթսաներու խուփը գետեղեցէք, և եւ այս խուփին վրայ ալ հաստկէկ թաց լաթ մը ծածկեցէք, խուփին եզերքները բոլորելով. այնպէս որ, շոգին դուրս ելլելու շատ տեղ չի գտնէ: Եռացման պահուն միայն պէտք է բանալ խուփը եւ վերը յիշուած գործողութիւնները արագօրէն կատարել. այսինքն տուփերուն ծակերը գոցելու գործողութիւնը:

Ապակեայ շիշերով պահածոներ պատրաստելու գործողութիւնը գրեթէ վերջինէն չի տարբերիր, բացի բերանը գոցելու դրութեանէ: Այս միջոցը կը գործածեն աւելի երբ հարկ ըլլայ պտուղներ կամ թթու հիւթեր պահել. թէեւ շատ տեղեր տուփերու մէջ կարգ մը սննդեղէններ պահելու համար կը գործածեն: Շիշերը կաթսային մէջ կը դնեն խցանը կիսով չափ թուլ կը թողուն, որպէս զի շոգին ազատօրէն դուրս ելլէ. եւ երբ եփելը լրանայ, այն ատեն դուրս կը հանեն, խցանը լաւ մը շիշին բերնէն ներս կը մղեն. եւ երկաթէ բարակ թելերով խաչածեւ կը կապեն:

Ղ. ԲՈՒՍ

ԳԵՏՆԱԽՆՁՈՐ ԵՒ ԻՐ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ

ՏՆԿԱՐԿՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ. — Ինչպէս ըսած ենք, գետնախնձորի դեռաբողբոջ ցողունները շատ կը վախճան սաւուցումներէ, ուստի տնկարկութեան համար պէտք է որոշել այնպիսի ժամանակ մը, որ գարնային յետամնաց ցուրտերը անցած ըլլան: Այս ժամանակը ցուրտ երկիրներու համար ապրիլի սկիզբէն մինչեւ մայիսի սկիզբներն է: Երբ մշակութեան սահմանուած հողերը թեթեւ և չոր են, ապրիլի սկիզբները, հակառակ պարագային, պէտք է որոշել այդ երկու ժամանակին մէջ յարմար օրեր: Տաք երկիրներու մէջ տնկարկութիւնը պէտք է կատարել փետրվարի վերջերէն մինչեւ Ապրիլի սկիզբները. որպէս զի տօթակէզ աաքութիւնները հասնելէ առաջ, տուկը մեծ մասամբ ուռած ըլլայ:

Ցուրտ երկիրներու մէջ կարելի է նաև ամառուան սկիզբներն ալ, այսինքն Յունիսի մէջ գետնախնձորի տնկարկում ընել յարմարագոյն պարագաներու մէջ. երբ տրամադրելի հողը թեթեւ և բնականէն տամուկ ըլլայ, այն ատեն հունձքը կանուխ կաթարուող բերքերէն անմիջապէս վերջը տնկարկումը կը կատարեն. զոր օրինակ կտաւատի, հաճարի ևն. հունձքէն անմիջապէս վերջը: Թէեւ հա-

սոյթը քիչ կ'ըլլայ այս պարագային որովհետեւ՝ աշխարհի կանխահաս սառուցումները չուտ հասնելով, մասամբ ցողունները կը խաթարեն, եւ մնացեալներն ալ իրենց բուսականութիւնը կատարելու դժուարութիւն կրելով, ելունդները տկար եւ ազագուն կը մնան։ Բայց եթէ կանխահաս տեսակներ գործածուին մշակութեան համար, այն ատեն առնուած հասոյթը ըստ բաւականին գոհացուցիչ կ'ըլլայ։ Տաք երկիրներու մէջ սակայն (Պոլիս եւ իր շրջականները, Իզմիր ևն.) բնականէն տաճուկ եւ կամ ոռոգուելու դիւրութիւն ունեցող հողերու մէջ, ամառնային տնկարկութիւնները գոհացուցիչ կերպով հասութեամբ կ'ըլլան, մանաւանդ ոռոգուելու դիւրութիւն ունեցող հողերու մէջ, այս առթիւ նախ արտը կ'ոռոգեն նախորդ հունձքը կատարուելէն անմիջապէս վերջը, և կը թողուն այսպէս որ չորնայ մինչև յարմարագոյն աստիճան մը, եւ անմիջապէս լաւ հերկ մը կուտան, եւ յետոյ կը կատարեն տնկարկումը։

Այս ամառնային տնկարկումը, վերոյիշեալ նպատակներ պայմաններով խիստ առատ հասոյթ մը կուտայ թէև, բայց սա անպատեհութիւնը ունի որ, իբր հետացու ծառայելիք գետնախնձորները նախորդ տարուան բերքէն ըլլալով, մինչև այն ատեն շատ դժուարաւ կը պահուին, և մեծ մասամբ կը նետին։ Սակայն, եթէ գարնային տնկարկումէ յառաջ եկած կանխահաս գետնախնձորներ տրամադրութեան տակ գտնուին, այն ատեն խնդիրը կը փոխուի։ Միայն թէ, այս գետնախնձորները տնկելէ առաջ մէկ քանի օրեր լոյսի ազդեցութեան տակ ձգելու է որ, չուտ բողբոջին, հակառակ պարագային՝ եթէ անմիջապէս տնկուին, երկար ատեն հողին տակը կը մնան առանց բողբոջելու։

Գետնախնձորի հիւանդութեանց առաջը առնելու համար, մէկ քանի հողագէտներ փորձած և առաջարկած են աշնան վերջերը կատարել տնկարկութիւնը, որպէս զի՝ ամրան տաքերը չի հասած, բերունձքը (մահուել առնել) կատարուի։ Բայց այս միջոցն ալ իր անպատեհութիւնները ունի, որոնց վրայ սիտի խօսիք կարգաւ։

Բացատրենք այժմ տնկարկումի եղանակները։ Տունկերուն իրարմէ ունենալիք յարմարագոյն հեռաւորութիւնները, ինչպէս և

ելունդները հողին տակ թաղելու խորութեան չափը։

ՏՈՒՆԿԵՐՈՒ ՀԵՌԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ. — Գետնախնձորները պատշաճօրէն տնկելու համար պէտք է գլխաւորապէս հետեւեալ երկու պայմանները կատարել։ 1. Իրարմէ այնչափ հեռու տնկել որ, տեղի կորուստ չըլլայ, և միևնոյն ատեն ալ մէկգմէկու տարածման արգելք չըլլան։ 2. Հեռաւորութիւնը այնպէս որոշելու է որ, մշակութեան գործողութիւնները խնայողական կերպով կատարուին ըստ կարելոյն, բայց միևնոյն ատեն նկատողութեան առնելու է որ, բերքի նուազում ալ չըլլայ։

Առաջին պայմանը կատարելու համար, գետնախնձորի մշակութիւնը աւելի յառաջ գացած երկիրներու սովորութեան համաձայն պէտք է որ տունկերը իրարմէ 30 կամ 33 հար.մեդր (սանթիմէթրո կամ վեր ի վերոյ 1 ուկէս թիգ) հեռաւորութեամբ տնկուած ըլլան։ Բայց շատ մը երկիրներու մէջ, ուր ձեռնաշխատութեանց վարձքը սուղ է, եւ գործաւորներն ալ քիչ, այսչափ իրարու մօտ տնկուած գետնախնձորի մշակութեան ծախսքը չափազանց ըլլալով, չազատեր, որովհետեւ կարելի չըլլալով ու է գործիքի միջոցով կատարել մշակութեան գործողութիւնները, պէտք պիտի ըլլայ անպատճառ գործաւոր բանեցնել, Հետեւաբար, ուր որ գործաւոր քիչ կայ, և օրականները սուղ են, պէտք է գործողութիւնները կատարել անպատճառ մեքենաներով, և այս պարագային մէջ ել պէտք է աշխատի հեռաւորութիւն մը տալ, որ թէ՛ գործիքը և թէ՛ լծուած կենդանիները մէջտեղերէն դիւրաւ անցնին առանց տունկերու ցողունները վնասելու։ Միջին հաշուով, այս հեռաւորութիւնը 50—60 հար.մեթր է։ Այս կերպով գծերուն մէջտեղէն գործիքը և կենդանիները դիւրաւ կրնան անցնիլ մշակութեան գործողութիւնները կատարելու համար, որով և գծերուն երկայնքին վրայ ալ կարելի է 30 հար.մեթր հեռաւորութիւն մը տալ։ Այս հաշուով, վեր ի վերոյ 15—20 քառ. հետացու գետնախնձոր պէտք է մէկ արտավարի համար։

Բայց վերոյիշեալ հեռաւորութիւնը զոր կուտանք գծերու երկայնքին համար, միջին հաշուով մ'է, և կը փոխուի հետացու գետ-

նախնձորի տեսակին համեմատ, զոր օրինակ, կրնայ ըլլալ որ, գործածուած տեսակը շատ տարածուելով՝ աւելի հեռաւորութիւն կը պահանջէ և կամ գետնախնձորները խոշոր ըլլալով, շատ ճիւղեր կ'արձակեն և հետեւորար ալ իրենց ընդարձակ տեղ պէտք է. կամ ուրիշ տեսակներ նուազ ճիւղեր արձակելուն հարկ կ'ըլլայ իրարու աւելի մօտ տնկել. և կամ ամառնային եղանակը ընդհանրապէս երաշտ երթալուն, հողին վրայ նպաստաւոր հովանի մը տարածելու համար, հարկ կ'ըլլայ նոյնպէս իրարու մօտ տնկել, որպէս զի՝ հողը իր խոնաւութիւնը շուտ չի կորսնցնէ. և կամ այս պարագային՝ եթէ արտը ուղղուելու յարմարութիւն ունի, այն ատեն ալ պէտք է հեռու տնկել, որովհետեւ նպաստաւոր խոնաւութեան մէջ շուտ ուռճելով, ցողունները աւելի կը ծաւալին և ըստ այնմ տեղ կը բռնեն: Շվարձի հետեւելով, բոլոր վերոյիշեալ պարագաներուն մէջ, գծերու երկայնքին վրայ տրուելիք հեռաւորութիւնը 16էն 50 հար.մեթրին մէջ է:

Թէ լիջ ԽՈՐՈՒԹԵԱՄԲ ՊԵՏԲ Է ՏՆԿԵԼ ԵՆՈՒՆԵՆԵՐԸ.—Միջին հաշուով, նպաստաւոր պայմաններու մէջ յարմար խորութիւնը 10 հար.մեթր է. չոր հողերու մէջ պէտք է 14—15 հար.մեթր խորութեամբ տնկել. և մինչև իսկ 20 հար.մեթր. իսկ խոնաւ հողերու մէջ 8 հար.մեթր:

ԳԵՏՆԱԽՆՁՈՐԸ ՏՆԿԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ.—Կամ ձեռքի գործիքներով կը տնկեն և կամ սայլարօրով (charrue, փուլուք): Ձեռքի գործիքներն են բահ, բրիչ և այլն: Տնկարկութեան ժամանակը՝ մօտեցած ատեն, արտը կը հերկեն վերջնականապէս, բայց մանկեռով (թըրմը) չեն շտկեր, որպէս զի սայլարօրին ձգած գծերուն հետքը չարուի: Գործաւոր մը բահը ձեռքը՝ գծերուն երկայնութեանը կ'սկսի հետգհետէ որոշեալ հեռաւորութեամբ պզտիկ փոսիկներ բանալ. կին մը կամ տղայ մը, մէկ ձեռքը գետնախնձորով լեցուն կողով մը բռնած իւրաքանչիւր փոսիկին մէջ մէյմէկ գետնախնձոր կը նետէ, որուն վրայ գործաւորը երկրորդ փոսիկէն ելած հողը լեցնելով կը ծածկէ: Ասիկա այսպէս ընելու համար, գործաւորը արտին գլխէն սկսելով նախ՝ փոսիկ մը կը բանայ, և քայլ մը երկուք դէպի ետ երթալով, երկրորդ փոսիկ

մը կը բանայ, որ ժամանակ իւր օգնականն ալ նախորդ փոսիկին մէջ, գետնախնձորը գետեղած կ'ըլլայ, և գործաւորն ալ երկրորդ փոսիկէն ելած հողը բահով վրան կը նետէ: Այսպէս շարունակելով կը հասնին մինչև արտին միւս ծայրը, միշտ իրենց ուղեցոյց ունենալով՝ արօրին ձգած գծին հետքը: Այս եղանակը պարզ, դիւրին և ընտիր է թէև, բայց թէ՛ վարժութիւն պէտք է և թէ՛ ձեռնաշխատութեան ծանր վարձք մը բեռնաւորելով ծախքին վրայ, սովորական պարագաներու մէջ և ընդարձակ մշակութեանց համար, ո՛չ խնայողական է և ո՛չ ալ գործադրելի:

Ընդարձակ մշակութեանց համար, ամենէն յարմարագոյն և խնայողական միջոցը սայլարօրով տնկելն է: Արտին ծայրէն սկսելով մէկ կամ երկու ակօսներ կը բանան, որոնց վերջինէն ելած հողը միշտ առաջինին մէջ կը լեցուի: Տունկերուն իրարու տրուելիք հեռաւորութեան համեմատ, առաջին ակօսին, կամ այս երկու ակօսներուն մէջ, գետնախնձոր չեն տնկեր. երբ երկրորդ ակօսը բանալ սկսին, այն ատեն մասնաւոր գործաւոր մը, որոշեալ հեռաւորութիւնով գետնախնձորներ կը գետեղէ՝ ակօսին մէջ, երբ այս վերջի ակօսը լրանայ և գետնախնձորով լեցուի, երկու, երեք կամ չորս ակօսներ, հետոյ հետէ բանալով պէտք եղած հեռաւորութիւնը կուտան, առանց այս վերջիններուն մէջ գետնախնձոր տնկելու, և այսպէս կը շարունակեն մինչև որ արտը աւարտի:

Շատեր կը գործածեն կրկնախորի (իթի տէմիրի), եռախորի (իւշ տէմիրի) կամ քառախորի (տէօրթ տէմիրի) սայլարօրներ, որոնցմով աշխատութիւնը դիւրին, խնայողական և շուտ կ'ըլլայ:

ՄՇԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԱՄՆԵՐ.—Դեռաբողբոջ ծիլերը հողէն դուրս ելլելուն պէս պէտք է լաւ վերնահերկ (bineage) մը տալ մնասակար խոտերը ոչնչացնելու, արտին երեսը հաւասարցնելու և հետագայ գործողութիւնները աւելի դիւրացնելու համար: Առաջին ակնարկով, այնպէս կ'երեւի թէ, այս տրուած վերնահերկով, նորաբողբոջ ծիլերը կը կոտորին և հետեւանքը մնասակար կ'ըլլայ, բայց այնպէս չէ՝ բողբոջները խուսիք խուսիք արձակուած ըլլալով, մանկեռի ակօսներուն միջո-

ցաւ իրարմէ կը զատուին կը բացուին, և հետեւաբար իրենց սնունդը աւելի ընդարձակ մակերեսովէ մը կը քաղեն, որով և արտադրութիւնն ալ զգալապէս կը շատնայ: Այս առաջին վերնահերկը մանկեւոյ կը կատարեն. արտին վրայ գծերուն ուղղահայեաց կերպով երկու անգամ պտտցնելով:

Երբ գետնախնձորի ցողունները լաւ մը բարձրանան, այն ատեն երկրորդ վերնահերկ մը ևս կուտան, բայց այս անգամ գծերուն մէջտեղէն և մարկեղով (չափա), Եւրոպացիք աւելի կը գործածեն այս առթիւ ձիաքարչ մարկեղ, քան թէ ձեռքի, որովհետեւ աշխատութիւնը շուտ և խնայողական կ'ըլլայ: Մարկեղով վերնահերկը կը կրկնուի այնչափ անգամ, որչափ վնասակար բոյսերը չափ երեւին հողին երեսը, և հողին վիճակը պահանջէ:

ՀՈՂԱԹՄԲՈՒՄ. — Մարկեղով առաջին վերնահերկը լրանալէն մէկ քանի օր վերջը, տունկերուն բոլորտիքը հողով կը լեցնեն, իբր թէ թումբեր շինած ըլլան. բայց որպէս զի այս գործողութիւնը կատարեալ ըլլայ, երկու անգամէն կ'ամբողջացնեն. որոց առաջինը՝ ինչպէս ըսինք, մարկեղեղէն մէկ քանի օր վերջը կը կատարուի, իսկ երկրորդն ալ երկրորդ մարկեղումէն (չափալամագ) վերջը. առաջինը թեթեւ՝ իսկ երկրորդը ուժով:

Հողաթմբումը կը կատարեն սայլարօրով կամ թմբարօրով (butoire). այս վերջինը հակադիր, երկկողմնաղոյգ ականջներով խուփ մ'ունի, որունք ի պահանջել հարկին և պէտք եղածին չափ կը բացուին կը գոցուին, այնպէս որ՝ նեղ գծերու մէջ կարելի կ'ըլլայ մէկ անգամէն երկու գծի մէջմէկ կողմը թմբել: Բայց լայն գծերու մէջ կը գործածեն սայլարօրներ:

Այժմ կը գտնուի Թմբիկեան դրութեամբ շինուած տեսակ մը սքանչելի մարկեղ, որ տեսակ տեսակ փոխնորդ խոփեր ունենալով, պէտք եղած ատեն կը ծառայէ իբր մարկեղ, իբր մանկեռ, թմբարօր ևլն: Լայն գծերու մէջ գոհացուցիչ կերպով այս երկրորդական մշակութիւնները կը կատարուին վերոյիշեալ մարկեղով, մէկ ձի կը բաւէ քաշելու և օրական 25—30 գործաւորի չափ գործ կը տեսնայ:

ԲԵՐՔԱՂ. — Աշնան մօտերը, գետնախնձո-

րի ցողունները կ'սկսին դելնիլ և թարչամիլ. այդ միջոցին ելունդները իրենց կատարելութեան հասած կ'ըլլան, պէտք է քաղել այլ ևս: Այս գործողութեան համար կը գործածեն բահ, բրիչ, արօր կամ սայլարօր. Եւրոպայի մէջ մասնաւոր կերպով շինուած մատնէքաւոր սկանջներով սայլարօրներ կան այս գործողութեան համար, որոնցմով դիւրին և խնայողական կ'ըլլայ:

Գետնախնձորները հողէն դուրս հանուելէն վերջը, հետզհետէ պէտք է ագարակ կրել, կարելի եղածին չափ քիչ պէտք է դաշտը թողուլ, որովհետեւ լոյսի ազդեցութեան տակ ելունդները կանաչ գոյն մը կ'ըստանան և կծու համ մը կ'առնեն, որով սննդեան ալ անյարմար կուգան: Այս անպատեհութիւնը աւելի շուտ առաջ կուգայ, եթէ ելունդները անձրևի բռնուին:

Դ. ԲՈՒՍ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Բերայի թաղ. Խորհրդի դիւանը կազմուեցաւ հետեւեալ կերպով. — Յ. Նուրեան էֆ. Ատենապետ, Գ. Սէլիմիյէճեան էֆ, Բ. Ատենապետ, Հրանտ էֆ. Ասատուր Ատենադպիր, Տիրան էֆ. Կիւմիւշկէրուան և Թ. էֆ. Էթմէքճեան Գանձապետ: Կրթական Հոգաբարձութիւնը կազմուեցաւ Վ. Էսաեան, Յ. Թորոսեան և Հրանտ Ասատուր էֆէնտիներէ:

Դիւանի կազմութենէն յետոյ Նուրեան էֆ. իր սովորական պերճախօսութեամբ արտասանեց հետեւեալը.

«1882 թուականին էր, այսօրուան նման տարուան վերջին ամիսներուն մէջ, ժամանակին Պատրիարքն ու Վարչութիւնը ձանձրացած Բերայի անվերջանալի վէճերէն, կամեցան բառնալ միանգամ ընդմիջտ իր ծոցէն ամէն տեսակ գծողութեանց պատճառներն ու պատրուակները, ու այս նպատակաւ եկան օժտեցին թաղը այնպիսի մատակարարութեամբ մը որ իր համբերալի տարրերով կա-

րենայ դարմանել անցեալին աննպաստ հետքերը ու թաղը յառաջդիմութեան չաւդին մէջ դնել։ Ես ալ բախտ ունեցայ գտնուելու այն կարգ մը յօժարակամ անձերուն մէջ, որոցմով կազմուեցաւ այդ մատակարարութիւնը, որ տասը տարի տեւեց, և սխալ չէ ըսել թէ թաղը դժգոհ ըլլալու պատճառ մը չունեցաւ։ Կը տեսնէք որ տասնըվեց տարի յետոյ Բերայի թաղը կուգայ աշխարհի ընտրութիւն մ'ընել որ կարենայ գոհացում տալ թաղին արդար պէտքերուն, և յօժարած է ինծի ևս հրաւէր կարգաւ սոյն կարեւոր աշխատութեան մասնակցելու։ Ենթակալ եմ պատուարժան թաղեցիներուն ցոյց տուած վստահութենէն։ Այլ սակայն, անցեալին մէջ թաղային գործերու մասին ստացած փորձառութիւնս զիս կը ստիպէ քննել նախ այն պայմանները՝ որով միայն կարելի է՝ ըստ իս՝ արդիւնաւէտ գործունէութիւն մը կազմակերպել։ Ուստի պարտաւոր եմ մի առ մի թուել ձեր առջև բոլոր այն հիմնական բարեփոխումները որոնք անհրաժեշտ կը թուին ինծի։»

Այնուհետեւ Նուրեան էֆ. թաղային մատակարարութեան իւրաքանչիւր բաժանումի գործառնութեան եղանակին վրայ իր տեսութիւնները պարզելով, եզրակացուց յատակադիծ մը գծելով, որուն միջոցաւ կարելի պիտի ըլլայ բարեփոխումներ ընել և համարատուութեամբ իրարու զօգել այդ ճիւղերը։

—Այս տարի ուսուցիչներու Քննիչ Յանձնաժողովին առջև քննութիւն տուող 35 ընտրելիներէն 22ը (12 այր և 10 կին) միայն յաղորդեցին ուսուցչական վկայագիր առնել։ Անկարող ու չպատրաստուած ուսուցիչներու լէզէոնին վրայ նոր խումբ մըն ալ աւելցաւ ահա։

—Ամենայն Հայոց Ս. Հայրապետը որոշեց է կայսերական հրամանին հակառակ պայմաններու մէջ գրաւուած ազգային խել մը կալուածներուն համար դատ բանալ ոռոսական դատարաններուն առջև, ընդդէմ Պ. Եանովսքիի, որ Կովկասի կրթական վերատեսուչն է։ Պաքուի Մարդասիրական ընկերութիւնն ու Յովնանեան վարժարանը զատ զատ դատ բացեցին Պ. Եանովսքիի դէմ, իրենց կալուածներուն գրաւման համար։

—Ս. Պատրիարք Հայրը անցեալ կիրակի Խազեղի եկեղեցիին մէջ պատարագելով, քարոզ խօսեցաւ, մասնաւորապէս Սրբուհի Մայրապետին գործունէութեան մասին դժուարութիւններ ընելով։ Ժամերգութեանց աւարտումէն յետոյ Գալֆաեան Որբանոցը այցելեց ուր սեղան մը տրուեցաւ։

—Փաստարան Սուրէնեան Աւետիս էֆ. ասկէ առաջ, ինչպէս յայտնի է, դատ բացած էր Շէյխ-Իւլ-Իսլամի դրան առջև՝ Գալֆաեան կտակին առթիւ։ Շէյխ-Իւլ-Իսլամի Դուռը իր իրաւասութենէն դուրս նկատած էր խնդիրը՝ առարկելով թէ Պատրիարքարանին անկէ այդ կարգի խնդիրներ կարգադրել։ Այս վճռին դէմ Սուրէնեան էֆ. բողոքած ըլլալով, Շէյխ-Իւլ-Իսլամ էֆ. խնդիրը անձամբ քննեց ու անփոփոխ հուշակեց նախկին վճիռը։ Այսպէս ծանօթ կտակը ամբողջովին գործադրելու այս վերջին փորձն ալ ի դերեւ ելաւ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հրատարակուեցաւ թէ լրագիրներու փուլը ի մօտոյ պիտի վերցուի՝ անոր տեղ նոր հասոյթի աղբիւր մը ստեղծելով։

—Երևորդի Բարեգործական Պաշարին վիճակահանութիւնը Դեկտ. 15ին պիտի քաջուի Արքունի ֆողերանոցին մէջ։

—Կ'ըսուի թէ Երկիրոս իշխան Կալէսի իշխանին աղջկան հետ նշանուեր է։

—Թուրքիոյ ընդհանուր Մամուլն ներկայացուցիչը որտի անհուն ցնծանօք աւետեցին ընթերցողաց՝ թէ Պուլկարիոյ իշխանին կողմանէ Արժանիքի Ա. Կարգի Պատուանշան ընդունած է Ներքին Գործոց նախարարութեան Մամուլ Տեսուչ Վսեմ. Պէհմէթ պէյ։ «Հանրագիտակ» ևս միւս լրագրաց հետ սըրտովին կը խնդակցի Նորին Վսեմութեան սոյն արժանաւոր գնահատման, որ իւր կորովի տաղանդովը ու հանճարեղ պաշտօնավարութեամբ արժանացած է միշտ ընդհանուր գո-

հունակութեանց և բարձրագոյն համարման :

—Բերկրութեամբ կը կարդանք Ուր. օրուան Սապահի մէջ թէ՛ Բ. Դրան իրաւագէտ-խորհրդական Նորատունկեան Վսեմ. Գարբիէլ էֆէնտի, ի վարձ իւր բարւոք և խղճամիտ ծառայութեանց՝ արժանացած է Օսմանիէի Ա. Կարգի Պատուանշանին :

—Քաղաքապետութիւնը առաջարկեց Բ. Դրան ջնջել Թրամուէյի Ընկերութեան արտօնագիրը, քանի որ ընկերութիւնը իր յանձնառութիւնները չի կատարեր : Պետական Խորհուրդը սրտեց տալ ընկերութեան պայմանագրով մը՝ ուրկէ յետոյ եթէ դարձեալ չարունակէ իր գանգատանաց առարկայ ընթացքը, արտօնագիրը ետ առնել :

—Պետական Խորհուրդը որոշում տուաւ որ գիւղացիք համերաշխութեամբ տուփեն այն միասնելը որոնք չարագործներու կողմէ կը հասցունեն այգիներու, պարտէզներու, այն պարագային երբ չարագործներուն հետքը գտնել անկարելի կ'ըլլայ :

—Ձեռնհաս պաշտօնատուներ ծանոյց թէ՛ կալուածական փոխանցումներու և անցագրերու համար հանուած իւմուխապէրները պաշտօնական մարմիններու կողմէ կնքելու պէտք չկայ :

—Վիլհելմ կայսրը ականակուռ ծխատուփ մը նուիրեց Սուրիոյ կուսակալին : Գերման լրագիրներուն ըսածին նայելով, Վիլհելմ Բ. կայսրը ինք գրի պիտի առնէ եղբր վերջին անգամ Արևելքի ուղևորութեան ունեցած պալատներէնները :

—Հաջին կշիւը 400 տրամի պիտի վերածուի : Յորենին գինը հետզհետէ իյնալու վրայ է եւրոպական հրապարակներուն վրայ :

—Սպարապետութիւնը նոր միջոցներ ձեռք կ'առնէ օսմ. զօրաբանականներուն վրայ թնդանօթածիգ և հեծեալ գունդեր աւելցնելու :

—Կը հերքուի սա լուրը թէ՛ օսմ. բոլոր պաշտօնատարներու ամսաթոշակներուն վրայ հարկերին 10 գեղջ պիտի ըլլայ :

—Կայս. կառավարութիւնը 5էն 25 զրուշ տուգանք պիտի առնէ այն ճամբորդներէն որոնք իրենց անցագիրը վիզէ ընել չեն տար :

—Կրէտէ գտնուող ֆրանսական զօրքերուն մեծ մասը ֆրանսա դարձեր են :

—Թիեսալիայի մէջ նոր աւազակախումբեր երևան ելեր են :

—Կրէտէի իսլամ գողթականները կը շարունակեն խուռներամ Իզմիր հասնիլ. տուներուն գիները շատ բարձրացած են :

—Օսմ. զօրքերը Եֆէնի ապստամբ ցեղերուն վրայ վերջերս յաղթականներ տանելով, յաջողած են զանոնք նուաճել, որով խաղաղութիւնը վերահաստատուած է նահանգին մէջ :

—Մինչ Պոլսի և Պրուսայի մէջ ամառնային գեղեցիկ օդերը կ'շարունակեն, էրզրումի մէջ կանգուն մը ձիւն տեղացեր է : Իզմիրի մէջ սաստիկ անձրեւներ տեղալով, հողագործ դասակարգին ուրախութիւն պատճառեր են :

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ազն. Մ. Սմբատեան էֆէնտի իր օրինակելի ուսումնասիրութեամբ մէկ օրինակ Հանրագիտակ կը նուիրէ ձեռամբ Պ. Յակոբ Պետրոսեանի, Պրուսայի Կուսակալութեան փազար-թէօյ գաղսի, Օրթաքէօյ անուն գիւղի Ազգ. երկսեռ վարժարանին :

Շատեր այնպէս կը հաւատան թէ Պոլսոյ հրապարակին վրայ ՃՇՄԱՐԻՏ և ԱՆԽԱՐԴԱԽ Մօռիւ ձկան իւղ չի գրտնւիր. այս կարծիքը շատ սխալ է՝ պէտք ունեցողները թող գիմեն Լ. Արսլանեան և Ս. Էմիրդէ Տեարց Դեղօրէից վաճառատունը, Ֆրնտգլեան Խանի տակ Թիւ 3, ուր պիտի գտնեն ուղղակի նորվէկիայէն բերել տրուած ամենաընտիր ձկան իւղի տեսակներ : Մեծաքանակ եւ փոքրաքանակ վաճառուներ կ'ըլլան խիստ գիւրամատչելի գիներով :

Ի գիմաց ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Կատարագրէ մի միայն Տնօրէն-Խմբագրապետ Ղ. ԲՈՂԱՏ, որու դիմել պէտք է, առանց բացառութեան, թերթիս վերաբերեալ ամէն գործառնութեանց համար :

ԱՐՏՕՆԱՏԷՐ Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ



ՀԱՃՈՅՔ ՍԸ

ՈՐ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՏՃԱՌԻ

Ճշմարիտ հաճոյքն այն է որ, ախորժելի ժամանց մը ընծայելով հանդերձ, առողջութեան ալ մեծապէս կ'օգնէ: Ներկայ դարուս մէջ հաճոյքի նիւթերը բազմաթիւ են. սակայն զարգացած աղջեր ամենէն աւելի ԹԷՅԻՆ նախապատուութիւն կուտան, անոր համար որ, այս թանկագին ըմպելին ամենածանր յոգնութիւնները շուտով կ'անցնէ և նոր կորով կը ներշնչէ, մարդուս ձգած աշխատութիւնը վերականգնու: Զմեռը արիւնը տաքցնելով, մարմինը ցուրտին դէմ կը պաշտպանէ՝ ամառն ալ զովութիւն ընծայելով, շատ մը հիւանդութեանց առաջը կ'առնէ: Խնամով պատրաստուած գաւաթ մը ԹԷՅԻՆ, նոյնչափ մսի ջուրի հաւասար սնունդ կը պարունակէ և իր անբաղդատելի ածնութեամբ կատարեալ նախախնամութիւն մըն է մարդկութեան համար: Սակայն առողջ որ ԹԷՅԻՆ անուամբ ծախուածներու մեծագոյն մասը խորդախուած ըլլալով, զուրկ են այս առաւելութիւններէն և զանոնք ճանչնալն շատ դժուար է, ուստի անոնք որ կը փափաքին ԸՆՏԻՐ, ԱՆԽԱՐԴԱՆ և միևնոյն ատեն ԱժԱՆ ԹԷՅԻ խմել, պէտք է Կ. ՆԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿԵՐՑ ԹԷՅԻՐը գործածեն. ուշադրութեամբ փրնտեղելով անոնց անունն ու մասնանիւր տուրիւրու վրայ: Որովհետեւ ԹԷՅԻ այս մեծ վաճառատուն, իւր երկարամեայ փորձառութեամբ, արեւելեան երկիրներէ մեծաքանակ ԹԷՅԻ արտածելուն և ահագին ասլրանքներ սպառելուն շնորհիւ, միշտ անխարդախ ԹԷՅԻ կը ծախէ ԱՆՄՐՑԵԼԻ գինեկով: Ընկերութեան Կեդրոնատեղին է Կ. Պոլիս, Ճէլալ Գէյ խոտ, Թիւ 10:

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ կը ծանուցանէ ԹԷ Մանկավարժական Գերականութեան Գ. մասը տպագրութեան յանձնուած է:

Մայս/Թերաշաֆթ Սիւթէմի Գաղղիերէն մասի ԺԱ. տետրը հրատարակուած է և բաժանորդագրութիւնը փակուած է: Գին 12 տետրերու 25 դրուշ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոքոյ եւ Գաւառաց հաւաք	
Հանրագիտակ տարեկան	50 դր.
» Վայելչագարդութեան բաժինով	80 »
Հանրագիտակ միայն Վայելչագարդութեան բաժինն	60 »
Հանրագիտակ Վայելչագարդութեան բաժին գունաւոր եւ մեծադիր 36 պատկերներով	110 »
Արճաւահմանի հաւաք	
Հանրագիտակ տարեկան	15 ֆր.
» Վայելչագարդութեան բաժինով	20 »
Հանրագիտակ միայն Վայելչագարդութեան բաժին	16 »
Հանրագիտակ Վայելչագարդութեան բաժին գունաւոր եւ մեծադիր 36 պատկերներով	25 »

ՀԱՒԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ՎԱՅՆԼՁԱԶԱՐԴՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆԻՆ

Ղ. ԲՈԼԱՏ

Խմբագրապէս Հանրագիտակ Հանդեսի

Թիւ 19 Էսփի-Զապթէյէ

Կ. Պոլիս

Տէր.

Գնահատելով Ձեր հանրօգուտ ձեռնարկը, հաճեցէք զիս բաժանորդ արձանագրել Թերթիդ վայելչագարդութեան բաժնին

1898

Ստորագրութիւն
(Ընթեռնելի)

Բնակութեան տեղ

Հասցէ

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Կը խնդրուի թերթիս հետ առնչութիւն տնեցող ամեն անձերէ (գործակալ, բաժանարգ, եւն.) որ բարեհաճին իրենց թղթակցութիւնները ուղղել հետեւեալ հասցէին, ԱՌԱՆՑ ՈՒՐԻՇ ՈՒ ԵՒ Ե ՄԻՋ-ՆՈՐԻՒ. հակառակ պարագային, եթէ անպատեհութիւններ տեղի ունենան, ամեն գտնողած տնկսելի մնալով, պատասխանատու չենք ըլլար:

در علیہ دہ بفتحہ قبوسندہ اسکی ضبطیہ دہ
صوباجی پارسخ افدینک ۱۹ نومروی دکانندہ
«مجموعہ علوم» غزنی سر محرری (بولاد) افندیہ

Հ. Բոլատ Տնօրէն-Խմբագրապետ
«ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ»

19. Էսկի-Ջապթիյէ, Պաղչէ-Գափու
Սթամպուլ

H. Polad Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK",
Chez M. Parsegh Hazarossian
19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Stamboul

ՄԵՐ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՈՐԷԻՑ

Հ. ԱՐՄԵՐԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՁԷ

Կ. ԳՈՒԽՍ ՁԵՏՔԼԵԱՆ ԻԱՆՈՒ ՏԱԿ ԹԻԻ

Սոյն վաճառատունը պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝ ամեն տեսակ թարմ գեղորայք. վիրաբուժական գործիքներ, Անգղիական և Գաղղ. պատրաստ գեղեր, գօնեակներ, գինիներ և հանքային ջուրերու մեծ մթերք մը, յարմար գներով: Հ. Արսլանեան և Ս. Էմիրզէ Ընկերութիւնը երկարատեւ անձնական փորձառութիւններ ունին: Ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացրելու համար, մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց կը շրկեն գեղորայք, ամենայն արագութեամբ, թարմ և մատչելի գներով:

ԳՈՐԾԱԿԱԼԻ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Ասա-բազար — Ստեփան էֆ. Սափրիչեան
Արաբկիւր — Գ. Տէվէճեան էֆ.
Էրզում — Նշ. էֆ. Տ. Ազարեան
Թեհրան — Կարապետ էֆ. Բաբարեան
Իզմիւր — Կարապետ էֆ. Մալէճանեան
Իզմիս — Աբրահամ էֆ. Կ. Կտաւճեան
Մալկարա — Վ. Մանուկ էֆ. Չօլաքեան
Խարբերդ — Խոսրով էֆ. Քէշիշեան
Թրեպոլի. — Գալուստ էֆ. Գըլըճեան
Սիմնայ. — Յ. էֆ. Պետրոսեան

Սիրապուր — Արմենակ էֆ. Սօմունճեան
Մարտ — Արմ. Տ. Յովհաննէս քահանայ
Վարժապետեան
Մանչեսթր. — Յակոբ էֆ. Բոլատեան
Պանսքրմա. — Արմենակ էֆ. Ս. Մսերեան
Սրվազ. — Յ. էֆ. Գարակէօզեան
Տրապզոն. — Սահակ էֆ. Էթմէքճեան
Կէլիպօլու — Յովսէփ էֆ. Տէր-Յովսէփեան
Մանքսա. — Մկրտիչ էֆ. Էրկանեան
Աֆիոն-Գարա-Հիսար. — էֆ. Արտաշէն էֆ Հալէպեան

Հանրագիտակ կը ծախուի ամեն լրագրագաւառաց քով, մասնաւորաբար

Մազրի-Դիւզ, Գոլու էֆ. Աղնաւորեանի խանութը:
Գաւր-Դիւզ, Լեւոն էֆ. Զաւարճեան Քեղարտնը:
Բերա, Եւթ փողոց Գառնիկ էֆ. Կիւլքերեանի խանութը: